ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՄԱՐԻՆԵ ԷԴՈՒԱՐԴԻ

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԷԿԶԻՍՏԵՆՑԻԱԼԻԶՄԸ ԵՎ ԽՈՒԱՆ ԿԱՌԼՈՍ ՕՆԵՏՏԻԻ ԱՐՁԱԿԸ

Ժ. 01.07 -«Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2018

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
ԱՐԱ ՀՐԱՉԻԿԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝
բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲԻ ՋԻՎԱՆՅԱՆ
բանասիրական գիտությունների թեկնածու
ՌՈՒԶԱՆՆԱ ԱՐՇԱԿԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է **2018 թ. Փետրվարի 9 -ին ժամը 12.30-ին** ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի Գրականագիտության 003 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ Երևան, Գրիգոր Լուսավորչի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գրադարանում:

Ատենախոսությունն առաքված է 2017 թվի դեկտեմբերի 26-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ բանասիրական գիտությունների թեկնածու Ս. Ա. Մարգարյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Նոր լատինաամերիկյան արձակը ձևավորվել է 20-րդ դարի եվրոպական գրականության երկու խոշոր հոսանքների՝ սյուրռեալիզմի և էկզիստենցիալիզմի ազդեցությամբ: Խուան Կառլոս Օնետտին (1909-1994) գրական այս ուղղության այն ներկայացուցիչներից է (Ռոբերտո Արլտ, Էդուարդո Մալեա, Էռնեստո Սաբատո, Մանուել Մուխիկա Լայնես, Խոսե Դոնոսո), ովքեր զգալիորեն կրել են եվրոպական էկզիստենցիալիզմի ազդեցությունը: Մեր ուսումնասիրությունը նվիրված է Օնետտիի ու ֆրանսիական էկզիստենցիալիզմի առնչություններին և ենթադրում է համակողմանի անդրադարձ ուղղության ակունքներին ու հիմնախնդիրներին, ֆրանսիական էկզիստենցիալիզմի փիլիսոփայությանը և գրականությանը, իսպանականի փիլիսոփայությանն ու լատինաամերիկյան գրականությանը, ինչպես նաև Օնետտիի՝ վաղ շրջանի փոքր արձակում՝ պատմվածքներում և վիպակներում, ավելի վառ արտահայտված էկզիստենցիալիզմի ու ֆրանսիական գրականության՝ հիմնականում Կամյուի և Սարտրի ստեղծագործությունների համեմատական վերլուծություն, ապա ուրուգվայցի գրողի վեպերի համակողմանի քննություն՝ հընթացս հեղինակի ստեղծագործություններում ֆրանսիական էկզիստենցիալիզմի մոտիվների ու թեմաների վերհանում և զուգադրում:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության առարկան Օնետտիի արձակը և ֆրանսիական էկզիստեն-ցիալիզմի փիլիսոփայության ու գրականության աղերսների քննությունն է, նպատակը՝ ֆրանսիական էկզիստենցիալիզմի հետ գրողի առանձին ստեղծա-գործությունների ունեցած թեմատիկ և պատկերային առնչությունների մանրամասն ուսումնասիրությունը: Մեր խնդիրներից է եղել ֆրանսիական էկզիստենցիալիզմի՝ Օնետտիի արձակի հետ աղերսվող շերտերի վերհանումը: Անվանի գրողի հայտնի երկերը քննելով լատինաամերիկյան էկզիստենցիալիզմի համատեքստում՝ փորձել ենք վեր հանել նաև ֆրանսիական և լատինաամերիկյան էկզիստենցիալիզմի տարբերությունները:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Էկզիստենցիալիզմի գրականությունը, թե՛ Ֆրանսիայում, թե՛ Լատինական Ամերիկայի երկրներում, ձևավորվելով անցած դարի 20-30-ական թվականներին, շարունակվել է ընդհուպ մինչև 1960-70 թթ.: Սակայն այսօր էլ այդ երկրներում ստեղծվում են էկզիստենցիալ երկեր. այս իմաստով մեր ուսումնասիրությունն արդիական է և անհրաժեշտ կարող է լինել ոչ միայն էկզիստենցիալիզմի տեսական խնդիրների, այլև Օնետտիի ստեղծագործությունների ուսումնասիրողների համար:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Վերլուծության հիմնական մեթոդը համեմատականն է, որի շնորհիվ բազմաթիվ ընդհանրություններ ու զուգահեռներ ենք բացահայտել ֆրանսիական էկզիստենցիալիզմի փիլիսոփայության (Գաբրիել Մարսել, Էմանուել Մունիե, Ժան-Պոլ Սարտր, Ալբեր Կամյու), գրականության և Օնետտիի ստեղծագործությունների միջև, ինչը հնարավորություն է տվել նկատել ոչ միայն նրանց երկերի միջև եղած ընդհանրությունները, այլև Օնետտիի և լատինաամերիկյան էկզիստենցիալիզմի գրականության առանձնահատկությունները:

ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Քննելով Օնետտիի երկերը՝ գրականագետները նկատում են նրանց վրա ամենատարբեր գրողների և հոսանքների՝ Ֆյոդոր Դոստոևսկու, Միգել դե Ունամունոյի, Լուի Ֆերդինանդ Սելինի, Ջեյմս Ջոյսի, Ջոն Դոս-Պասոսի, Ուիլյամ Ֆոլքների, [1] և Լուիջի Պիրանդելլոյի [2] սյուրռեալիզմի, էկզիստենցիալիզմի ազդեցությունը: Իսպանագիր գրականագետներն իրենց հոդվածներում այդ առնչությունները նշում են՝ շատ դեպքերում առանց հանգամանալից համեմատություններ ու զուգահեռներ անցկացնելու: Օնետտիին նվիրված բազմաթիվ հոդվածներ և մենագրություններ կան՝ այդ թվում Վարգաս Լյոսայի, Մարիո Բենեդետտիի ու Ալոնսո Կուետոյի մենագրությունները: Ուսումնասիրելով մեծաքանակ հոդվածներ և մենագրություններ՝ մենք նկատել ենք, որ դրանց մեծամասնության մեջ գրողի արձակը հիմնականում դիտարկվում է պատումի տեխնիկայի ու ոճական հնարքների կիրառման տեսանկյունից, քանզի վիպասանի արձակն այդ տեսանկյունից իրոք ուսումնասիրության անսպառ նյութ է տրամադրում:

Օնետտին բազմաթիվ առնչություններ ունի էկզիստենցիալիզմի հետ, բայց նրա ստեղծագործությունն այդ ուղղության լիարժեք դրսևորում համարելը դժվար է: Մի կողմից, նա չունի իր մշակած էկզիստենցիալիստական-փիլիսոփայական համակարգը, մյուս կողմից իր ամբողջ գրական կյանքում միշտ չէ, որ հետևողականորեն հարել է այդ ուղղությանը: Հատկապես նրա ուշ շրջանի ստեղծագործություններում դրսևորվում են բազմաթիվ միտումներ, որոնք դուրս են բերում նրան էկզիստենցիալիզմի շրջանակներից: Արձակագրին նվիրված հոդվածներում նշվել է էկզիստենցիալիզմի հետ ունեցած աղերսների մասին, բայց դրանք հիմնականում ընդհանուր բնույթի դիտարկումներ են: Հիմք ունենալով այդ դիտարկումները՝ մենք զարգացրել ենք դրանք:

---

[1] Prof. Ms. José Ricardo Dordron de Pinho, El mundo sombrio de Juan Carlos Onetti, http://publicacoes.unigranrio.com.br/index.php/reihm/article/viewFile/12/19

[2] Angélica Maciel, El sueño y la realidad dentro de El Pozo de Juan Carlos Onetti, http://www.onetti.net/es/descripciones/maciel

Օնետտիի ողջ ստեղծագործությունն էկզիստենցիալիզմի տեսանկյունից հետևողականորեն քննող առանձին որևէ հոդված և ուսումնասիրություն չի եղել: Հաճախ նշվում են Սարտրի հետ ունեցած աղերսները, մինչդեռ դիտարկման համար մենք ֆրանսիականի ավելի ընդգրկուն դրսևորում ենք վերցրել: Օնետտիի և ֆրանսիական էկզիստենցիալիզմի որոշ ստեղծագործությունների համեմատական վերլուծությունը հնարավորություն է ընձեռում գրողի երկերի մեջ բացահայտել ու քննել նորանոր շերտեր, նոր դիտարկումներ, բացահայտումներ և եզրակացություններ անել նրա արձակի վերաբերյալ: Էկզիստենցիալիզմի ու Օնետտիի վերաբերյալ տեսակետների համակարգման և զարգացման, հանգամանալից համեմատական քննության, սեփական եզրակացությունների ու տարբեր դիտարկումների մեջ էլ կայանում է մեր ատենախոսության գիտական նորույթը:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի Արտասահմանյան գրականության և համեմատական գրականագիտության բաժնում՝ երաշխավորվելով հրապարակային պաշտպանության:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են գիտական ժողովածուներում հրապարակված հոդվածներում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլխից և եզրակացություններից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ անդրադարձել ենք լատինաամերիկյան նոր արձակի խնդիրներին, տվել Օնետտիի ստեղծագործական կյանքի համառոտ բնութագիրը, հիմնավորել աշխատանքի թեման ու մեթոդաբանությունը, ներկայացրել կառուցվածքը, նյութի ուսումնասիրվածության աստիճանը, ատենախոսության արդիականությունը և նորույթը, պարզաբանել նպատակներն ու խնդիրները:

Նյութի արդյունավետ համակարգման նպատակով ընտրել ենք ատենախոսության հետևյալ կառուցվածքը. առաջին գլուխը բաժանված է երկու մասի՝ առաջինը նվիրված է էկստենցիալիզմի ակունքներին ու խնդիրների շրջանակի որոշարկմանը և ֆրանսիական էկստենցիալիզմին, իսկ երկրորդ մասը լատինաամերիկյան էկստենցիալիզմի գրաքննական ակնարկ է: Երկրորդ գլուխը հիմնականում նվիրված է Օնետիի վաղ շրջանի փոքր արձակում՝ պատմվածքներում և վիպակներում, իսկ երրորդը՝ վեպերում արծարծված էկզիստենցիալ խնդիրների քննությանը՝ ֆրանսիական համանուն ստեղծագործությունների հետ որոշակի համեմատություններով:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՕՆԵՏՏԻԻ ԱՐՁԱԿԸ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԷԿԶԻՍՏԵՆՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ԵՎ ԼԱՏԻՆԱԱՄԵՐԻԿՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

Էկզիստենցիալիզմը ոչ միայն փիլիսոփայական, այլև գրական երևույթ է և որպես այդպիսին իր լիարժեք դրսևորումն է գտել ֆրանսիական գրականության մեջ: Այս գլխում մենք անդրադարձել ենք գրական այս ուղղության փիլիսոփայության ակունքներին՝ նկատելով, որ այն ոչ թե փիլիսոփայական համակարգ է, այլ գոյի անհատական վերապրում, որ հնարավոր է դարձնում փիլիսոփայությունը վերածել գրականության պատկերավոր լեզվի: Չնայած ֆրանսիական էկզիստենցիալիզմը կրել է և՛ Կիերկեգորի, և՛ գերմանացի էկզիստենցիալիստներ Հայդեգերի ու Յասպերսի, և՛ Հուսեռլի ֆենոմենոլոգիայի (Սարտր), և՛ Կաֆկայի (Կամյու) ազդեցությունը, սակայն դժվար է գտնել որևէ այլ հեղինակ, որ այնքան խորը հետք թողած լինի ֆրանսիական ուղղության վրա, ինչպիսին Ֆ. Դոստոևսկին է: Դժվար է գտնել ֆրանսիացի մի էկզիստենցիալիստ գրող, որը չի խոստովանել նրանից կրած ազդեցությունը: Մենք հանգամանորեն կանգ ենք առել էկզիստենցիալիզմի՝ Դոստոևսկուց կրած ազդեցության վրա (քանի որ այդ ազդեցությունը կրել են նաև լատինաամերիկյան էկզիստենցիալիստներն ու Օնետտին), անդրադարձել ենք Կամյուի՝ Կիրիլովի և Ստավրոգինի կերպարների վերլուծությանը, Անդրե Ժիդի էսսեների և հոդվածների «Դոստոևսկի» գրքին, նրա և Ա. Մալրոյի վեպերի՝ այսպես ասած, էկզիստենցիալ, դոստոևսկիական հերոսներին, Դոստոևսկու և Մորիակի աշխարհայացքի աղերսներին՝ Սարտրի հետևությամբ էկզիստենցիալիզմի գրականության ելակետային դրույթը համարելով ռուս դասականի՝ «Եթե աստված չկա, ապա ամեն ինչ թույլատրելի է» խոսքերը:

Մանրամասն քննել ենք ինչպես կրոնական (Լեոն Բլուա, Գաբրիել Մարսել, Անդրե Ժիդ և Ֆրանսուա Մորիակ), այնպես էլ աթեիստական էկզիստենցիալիզմը (Անդրե Մալրո, Ալբեր Կամյու, Ժան-Պոլ Սարտր): Էկզիստենցիալիզմի այս ներհակ ուղղություններն, ըստ Սարտրի (այդ մասին խոսվում է «Էկզիստենցիալիզմը հումանիզմ է» գրքում), միմյանց հակադրվում են ըստ գոյության և էության տարբեր հարաբերակցություններ: Ըստ կրոնական էկզիստենցիալիզմի, էությունը նախորդում է գոյությանը, մինչդեռ աթեիստականը պնդում է հակառակը՝ քանի որ Աստված գոյություն չունի, մարդն ինքն է իրեն կերտում, ինքն է պատասխանատու իր էության համար: Այս ելակետից են բխում էկզիստենցիալիզմի մյուս մոտիվները՝ լքվածություն, տագնապ, հուսալքություն: Տագնապը ծանոթ է այն մարդուն, ով պատասխանատվություն է վերցնում: Լքվածություն ասելով՝ Սարտրը նկատի ունի Աստծու բացակայությունը: Աստված չկա, ուստի մարդը հենարան չունի ոչ դրսում, ոչ էլ իր ներսում: Սա է մարդու հուսալքության պատճառը, ինչն

ամենևին նրան հուսահատության չպետք է դրդի: «Ինչ-որ բան նախաձեռնելու համար բնավ հարկ չկա, որ մարդը հուսա»,- հայտարարում է Սարտրը: Մարդը, ըստ նրա, գործողությունների հանրագումար է և այնպիսին է, ինչպիսին ինքն է իրեն կերտում: Իրականությունը ձևավորվում է մարդկային գործունեության միջոցով, ուստի փիլիսոփան ձգտում է ապացուցել էկզիստենցիալիզմի հումանիստական բնույթը[3]: Իր գաղափարները նա փորձում էր մարմնավորել ոչ միայն փիլիսոփայության, այլև հասարակական գործունեության մեջ և գրական հերոսների ճակատագրերում: Գեղարվեստական գործերում նա հիմնականում արծարծում է ազատության խնդիրը: Հասարակությունն անհատին թշնամի օրգանիզմ է, ուր մեկը սահմանափակում է մյուսի ազատությունը: Էկզիստենցիալ մարդը նախընտրում է խզել կապերը հասարակության հետ, իսկ հաճախ էլ, իր ազատ ընտրությունը հաստատելու համար, դիմել անհիմն թվացող արարքների՝ երբեմն չպատճառաբանված սպանություն գործելով, ինչը փորձում է բացատրել մարդկանց հանդեպ ատելությամբ: Սարտրը ցույց է տալիս նաև անձի ազատությունը սահմանափակող երևույթը՝ մահը, որի առջև մարդը պարզապես անզոր է («Պատը»):

Քննության առնելով Կամյուի փիլիսոփայական հայացքները («Սիզիփոսի առասպելը», «Ընդվզող մարդը»)՝ նկատել ենք, որ նրա փիլիսոփայական էսսեները, ի տարբերություն սարտրյան հասկացությունների փիլիսոփայական լեզվի, աչքի են ընկնում գեղարվեստական պատկերավորությամբ ու պարզությամբ: Եթե Սարտրը դասական՝ Կանտի, Հայդեգերի կամ Հուսեռլի փիլիսոփայության հետևորդ էր, ապա Կամյուն փիլիսոփայում էր Ֆ. Նիցշեի «կյանքի փիլիսոփայության» ոգով: «Ուզում եք փիլիսոփայել, գրեք վեպեր»,- ասում է նա: Սարտրի «Սրտխառնուքից» (1938) չորս տարի անց լույս է տեսնում «Օտարը»: Բազմաթիվ նմանություններով հանդերձ՝ այս վեպերն արմատապես տարբերվում են. առաջինը փիլիսոփայական, երկրորդը հոգեբանական վեպ է: Կամյուի երկում իրադարձությունը կարևոր տեղ է գրավում, մինչդեռ Սարտրի փիլիսոփայական վեպերում իրադարձություններ չկան: Օնետտին այս իմաստով Սարտրի հետևորդն է:

Տարբերակելով ֆրանսիական էկզիստենցիալիզմի կրոնական և ոչ կրոնական ուղղությունները՝ նկատել ենք, որ Օնետտիի հերոսներն ավելի շուտ անհավատ են՝ մռայլությունը, անհուսությունը, կեցության անիմաստության նրանց վերապրումն առավելապես հիշեցնում է ֆրանսիական էկզիստենցիալիզմի աթեիստական ուղղությունը:

Օնետտիի էկզիստենցիալիզմը ֆրանսիականի հետ համեմատել անկարելի էր, եթե չխոսվեր նաև լատինաամերիկյան էկզիստենցիալիզմի՝ Օնետտիի արձակում առկա միտումների մասին: Մեքսիկացի ականավոր գրող և տեսաբան Օգտավիո Պասը նկատում է, որ Լատինական Ամերիկայի երկրների

[3] Sartre J.-P.. L’existentialisme est un humanisme. Nagel, P., 1970, 147 p.

գրականություններում առանձին հոսանքներ և ուղղություններ չկան [4] : Լատինաամերիկյան էկզիստենցիալիզմն առանձին ուղղություն դժվար է համարել նախ այն պատճառով, որ այն ֆրանսիականի նման իր ուսմունքը շարադրող դոկտրինաներով հանդես չի եկել: Այն բացառապես գրական երևույթ է, ֆրանսիականի նման կրել է Դոստոևսկու ազդեցությունը (գրականագիտության մեջ նկատված է Դոստոևսկու ընդհատակյա և Օնետտիի հերոսների նմանությունը), բայց լատինաամերիկյան էկզիստենցիալիզմի գրականությունը ձևավորվել է գերմանականին ու ֆրանսիականին նախորդող իսպանականի (Խոսե Օրտեգա-ի-Գասեթ, Միգել դե Ունամունո) ազդեցությամբ, զարգացել եվրոպականին զուգահեռ, գրեթե միաժամանակ, և դժվար է այն միանշանակ եվրոպականի ազդեցություն համարել: Անդրադարձել ենք Օնետտիին նախորդած լատինաամերիկյան էկզիստենցիալիզմի երկու խոշորագույն հեղինակների՝ Արլտի (Կորտասարն ասել է. «Մենք բոլորս դուրս ենք եկել Արլտի գրչից»: [5]) և Մալեայի ստեղծագործություններին՝ ուրվագծելով լատինաամերիկյան էկզիստենցիալիզմի առանձնահատկությունները: Օնետտիի կերտած կերպարները շատ կողմերով են հիշեցնում Արլտի հերոսներին: Նրանք նույնպես երազող են և ունեն իրենց ներքին իրականությունը: Ի տարբերություն Օնետտիի հերոսների, Մալեայի հերոսները հավատում են Աստծո գոյությանը, թեև Աստված նրանց համար անհաս է ու անճանաչելի:

Անդրադարձել ենք նաև Խոսե Դոնոսոյի արձակին՝ նրա և Օնետտիի ստեղծագործությունների համեմատությամբ քննելով վերջինիս էկզիստենցիալիզմի որոշ յուրահատկություններ: Լատինաամերիկյան էկզիստենցիալիստ գրողներին այս կամ այն չափով հատուկ են ոչ միայն գոյաբանական, այլև սոցիալական մոտիվները: Մարդու հուսալքության, հասարակությունից օտարման և մենության վերապրման հետ սերտորեն կապված է աղքատության, թշվառության, «կյանքի հատակում» լինելու մոտիվը: Սոցիալական ու էկզիստենցիալ մոտիվների այս համադրությունը, երբեմն նաև կենցաղագրական շերտն այս կամ այն չափով հատուկ են թե՛ Արլտի, թե՛ Մալեայի, թե՛ Օնետտիի, թե՛ Դոնոսոյի արձակին, որի պատճառը թերևս այդ երկրների սոցիալական վիճակն էր: Այս առումով լատինաամերիկյան սոցիալական էկզիստենցիալիզմը տարբերվում է ֆրանսիական մետաֆիզիկական էկզիստենցիալիզմից:

Լատինաամերիկյան էկզիստենցիալիստներին, նաև Օնետտիին, հատուկ է լատինաամերիկյան նոր արձակի «պարահանդեսայնությունը», գրոտեսկն ու համեմատություններով, մակդիրներով գերխիտ, գերհագեցած պատումը: Ոճական բարոկկոն բնորոշ է նաև էկզիստենցիալիստական տրամադրություններ բերող գրեթե բոլոր հեղինակներին: Այդ գրողներից շատերին, նաև

---

[4] Paz, Octavio, EL LABERINTO DE LA SOLEDAD, cd. Fondo de Cultura Económica, S.A., Madrid, 1950, p. 6.

[5] Cortázar J. «Prefacio» en Roberto Arlt, Obras completas, 2 vols. Buenos Aires: Carlos Lohlé, 1981, pp. 3-11.

Օնետտիին հատուկ են լատինաամերիկյան արձակը բնութագրող այլ հնարքներ, ինչպես պատումի դեմքի փոփոխությունը՝ անցում առաջին դեմքով պատումից երրորդ և դարձյալ առաջին դեմքի: Ոճական նմանատիպ հնարքները և աշխարհընկալումն ընդհանրապես հատուկ չէ ֆրանսիական էկզիստենցիալիզմի ոչ մի հեղինակի:

Լատինաամերիկյան էկզիստենցիալզմն ունի իր թեմատիկ շեշտադրումը՝ մարդու մենության թեման (Մարկեսի արձակում այն առանցքային է): Մենությունն էկզիստենցիալիզմի կարևորագույն թեմաներից է և բնորոշ է լատինաամերիկյան շատ հեղինակների: Պասի «Մենության դիալեկտիկան» էսսեն լատինաամերիկյանի յուրօրինակ հանգանակ է: Մարդը ծնվելուց հետո ընկնում է օտար ու թշնամական աշխարհ, աստիճանաբար նրա՝ աշխարհից տարանջատված լինելու զգացումը փոխվում է մենության զգացման: Միայնակ մարդը լքված է Աստծու կողմից: Մենությունը դառնում է անհատի ճակատագիրը, նա փորձում է փախչել դրանից, բայց չի հաջողվում: Մարդը ծնվում և մահանում է մենակ: Մահվան ապրումը ժամանակի հետ փոխակերպվում է սեփական մահկանացության գիտակցման, իսկ մեր շուրջն ամեն ինչ հիշեցնում է, որ մենք պետք է մահանանք: Մեզ սովորեցնում են ոչ այնքան ապրել, որքան մահանալ: Մարդը փորձում է փրկվել սիրելով: Սիրո տառապանքը մենության տառապանքն է: Մենք հաղորդակցվում ենք ոչ թե կնոջ, այլ նրա մասին ունեցած մեր պատկերացման հետ: Տղամարդը և կինն էությամբ օտար են: Սերն ընտրություն է, բայց մարդը չի ընտրում, ընտրության ազատությունը պատրանք է:

Պասը, մենության տեսանկյունից քննելով էկզիստենցիալ հասկացությունները, ուրվագծում է մարդու երկրային ողջ ուղին[6]: Ինչ-որ իմաստով միայնակ մարդը լատինաամերիկյան արձակի հիմնական կերպարներից է: Անդրադառնալով Մարկեսի գործերում մենության խնդրին (իսկ Մարկեսն ինքն է խոստովանել վաղ շրջանում էկզիստենցիալիզմից կրած ազդեցությունը), փորձել ենք էկզիստենցիալիզմը տարբերակել մոգական ռեալիզմից: Վերջինս հատկանշվում է մոգականի, անսովորի առկայությամբ, մինչդեռ էկզիստենցիալիզմը սովորականի, առօրյայի, տաղտուկի, ձանձրույթի իրականությունն է: Մյուս կողմից, մոգական ռեալիզմն ունի իր ընդգծված ազգային բնույթը, իսկ էկզիստենցիալիզմը չունի:

Պասի էսսեում, ինչպես Սարտրի մոտ, լավագույնս են ցույց տրված, թե այդ մոտիվները՝ մենություն, լքվածություն, ճակատագիր, դատապարտվածություն, փախուստ, պատիժ, ընտրություն, ազատություն, օտարում և մահ, ինչպես են շաղկապված միմյանց: Այսպիսով, գրական այս ուղղության առանցքում մարդկանց մենության և օտարման թեման է, իսկ Օնետտիի արձակը Կառլոս Ֆուենտեսը համարում էր «մեր օտարված ժամանակների հիմնաքարը»[7]:

---

[6] Octavio P., Paz, O., El laberinto de la soledad, cd. Fondo de Cultura Económica, S.A., Madrid, 1950, 304 p.

[7] Fuentes C. : "La nueva novela", 1969, p. 28.

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԷԿԶԻՍՏԵՆՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՈՏԻՎՆԵՐՆ ՕՆԵՏՏԻԻ ՎԱՂ ՇՐՋԱՆԻ ՓՈՔՐ ԱՐՁԱԿՈՒՄ

Օնետտիի առաջին ստեղծագործության՝ 1933-ին լույս տեսած «Ավենիդա դե Մայո-Դիագոնալ-Ավենիդա դե Մայո» պատմվածքի՝ Բուենոս Այրեսի փողոցներում շրջող հերոսը երևակայությամբ մերթ տեղափոխվում է Այյասկա, մերթ վերադառնում «մարդկանց իրական աշխարհ»: Ռոսա Մարիա Պալերմո դե Վիսկան Օնետտիի վեպերին նվիրված ուսումնասիրության մեջ նկատում է, որ այդ պատմվածքի հերոսի կերպարում «արդեն իսկ կարելի է տեսնել այն երազողին, որ խուսափում է իրական կյանքից, ժխտում այն, պայքարում դրա դեմ, երևակայության շնորհիվ կյանքը տեսնում այլ կերպ: Արձակագրի հետագա գործերում շատ գծեր են աստիճանաբար անհետանում, մնում է միայն երազող մարդու կերպարը, որ հայտնվել էր առաջին ստեղծագործության մեջ»[8]:

Կյանքից և իրականությունից փախուստի մոտիվը, որ բնորոշ է նաև Սարտրի հերոսներին, կարմիր թելի պես անցնում է Օնետտիի առաջին պատմվածքից մինչև վերջին վեպը: Հեղինակի պատմվածքների («Հնարավոր Բալդին», «Էսբերգի ափին», «Հեռագրավար Մաթիասը», «Այնքան Թախծոտ», «Դժոխքի հմայող անդունդը» և այլն) գոյաբանական վերլուծության շնորհիվ առանձնացրել ենք այն մոտիվները, որոնց զուգահեռները գտել ենք ֆրանսիական էկզիստենցիալիզմի մեջ: Մարդն աշխարհ է գալիս պատահականությամբ, բայց դատապարտված է իրեն դեպի մահն ուղեկցող անհրաժեշտությանը. նա կարող է ընտրություն կատարել միայն իրական կյանքով կամ երևակայության ու հորինված աշխարհում ապրելու, սեփական մահով մեռնելու կամ ինքնասպան լինելու միջև: Օրինաչափ է կարծես, որ, երբ գրողի հերոսները չեն կարողանում ընտրություն կատարել հոգուտ երևակայական կյանքով ապրելու, ապա ընտրությունն ապրելու և ինքնասպան լինելու միջև կատարվում է հոգուտ վերջինիս: Ինքնասպանությունը Կամյուի փիլիսոփայական հայեցակարգի հիմնական խնդիրն էր: Այն հիմնական խնդիրն է նաև Օնետտիի հերոսների համար:

Անդրադարձել ենք Կամյուի և Օնետտիի գործերում երջանկության խնդրին: Օնետտիի երջանկության մեկնությունը հարազատ է Կամյուի ընկալմանը «Երջանիկ մահ» վեպում: «Մարդը կարող է երջանիկ լինել ոչ միայն հակառակ մահվան, այլև մահվան շնորհիվ»[9],- գրել է Ա. Հակոբյանը «Ալբեր Կամյուն և երջանկության խնդիրը» հոդվածում: Օնետտիի «Տունն ավազի վրա»

---

[8] Палермо В.-Р-М., Романы Хуана Карлоса Онетти, Диссертация на соискание филологических наук,, 1985, с. 4-5.

[9] Կամյու Ա., Օտարը, Ե.,1994, 248 էջ:

պատմվածքի հերոսի համար երջանկությունը կապվում է բնությանը մերձենալու հետ: Նրա պատմվածքներում բազմիցս արծարծվում է մարդու և բնության ներդաշնակության թեման: Գրողի քաղաքաբնակ հերոսները տառապում են մենությունից: Արձակագրին մտահոգում է նաև մարդու և քաղաքի հակասության ու բախման, և, դրան հակառակ, բնությանը մերձ լինելով՝ կորուսյալ երջանկությունը վերագտնելու թեման: Հատկապես վաղ շրջանում ևս «Կամյուի մտքերի հիմքում երջանկության, սիրո և ուրախության թեման է, որը նրան արմատապես տարբերում է Սարտրից»[10]:

Վաղ շրջանում Օնետտիին նույնպես հետաքրքրում էր երջանկության խնդիրը և նա Կամյուի նման գրեթե նույն լուծումներն է առաջարկում: Մարդը հասարակության մեջ երջանիկ լինել չի կարող, նա կարող է երջանիկ լինել միայնության կամ բնության հետ ներդաշնակության շնորհիվ: Սարտրի հերոսներն անկարող են հասկանալ բնությունը, ապրել այն ներդաշնակությունը, որ ունեին Կամյուի վաղ գործերի հերոսները բնության հետ: «Ռոմանտիկ էկզիստենցիալիստ» Կամյուի կերպարներին բնորոշ էր աշխարհի գեղեցկության հեթանոսական վերապրումը, դրա հետ հաղորդակցման, ալժիրյան արևի ու ծովի, «մարմնական կեցության» բերկրանքը»[11]: Օնետտիի «Ապաքինում» պատմվածքի հերոսուհին հիշեցնում է Կամյուի երկու՝ «Օտարը» և «Երջանիկ մահ» վեպերի հերոսին, որի համար երջանկությունը ծովի, արևի և բնապատկերի հետ ձուլված լինելն էր, մինչ մարդկային հասարակությունը դուրս է մղում նրան այդ երջանկությունից: Նա անհուն երջանկություն է զգում, երբ պառկած է ծովափին, նա ընդամենը բնապատկերի մասնիկ է, իսկ երբ հեռախոսով լսում է ամուսնու ձայնը, զգում է, թե ինչպես է իր մեջ նորից ներխուժում «քաղաքի ժխորը, անցյալը, տառապանքի ցավը, մարդկային գոյության աբսուրդի զգացողությունը», նա զգում է, որ կորցնում է «երջանկության լիարժեքության զգացողությունը»:

Կամյուի և Սարտրի ստեղծագործության ամենաանմիջական արձագանքներն ենք գտնում Օնետտիի «Անդունդը» վիպակում: «Սենյակում անցուդարձ էի անում, երբ հանկարծ ինձ թվաց, թե այն առաջին անգամ եմ տեսնում»[12]: Առաջին նախադասությամբ իսկ հեղինակը փորձում է որսալ իրականությունից մարդու հանկարծակի օտարման ակնթարթը, երբ անսպասելիորեն խզվում է նրա և արտաքին իրականության կապը, ակնթարթը, որի մասին Կամյուն ասում էր. «Մի ակնթարթում մենք դադարում ենք հասկանալ աշխարհը»[13], իսկ Սարտրի «Սրտխառնուքի» հերոս Անտուանը, նայելով գարեջրի գավաթին, հանկարծ բացահայտում է, որ աշխարհն իրենից

---

[10] Marcel J. Mélançon, Albert Camus. Analyse de sa pensée. Suisse: Les Éditions universitaires Fribourg, 1976, p. 55

[11] Зарубежная литература XX века, М., 2000, стр. 134.

[12] Onetti J., El pozo, M., Punto de lectura, 2007, p. 1.

[13] Camus A., Le Mythe De Sisyphe. Essai Sur L'absurde. P.: Les editions Gallimard, 1942, p. 22.

դուրս է գտնվում, օտար է իրեն և խորթ ու անճանաչելի, որ մարդկային գիտակցությունը հակադրված է իրերի անճանաչելի աշխարհին: Օնետտիի վիպակը սկսվում է հանգուցային այդ ակնթարթից: Հերոսը՝ Էլադիոն դուրս չի գալիս սենյակից: Անդրադարձել ենք փակ սենյակի փոխաբերությանը Սարտրի և Օնետտիի ստեղծագործություններում, ուր մարդը, մեկուսանալով, փորձում է պաշտպանել իր խոցելի ներքինն արտաքին աշխարհի սպառնալիքներից. այսպիսով սենյակի մեջ թաքնվում է հաղորդակցության վախը: Օնետտին ևս ներկայացնում է «սահմանային» այդպիսի մի իրադրություն՝ փակ սենյակ, և էկզիստենցիալ, պասիվ հերոսի տիպ, որն անկողնում պառկած լինելու անասելի ձանձրույթը փոխարինում է սենյակում այսուայնկողմ քայլելով՝ հոտոտելով թևատակերն ու ինքն իրենից նողկանք զգալով: Նողկանքը, որ Օնետտիի գործերում հաճախ է հանդիպում, նույն սարտրյան սրտխառնուքն է: «Կեցությունը և ոչինչը» աշխատության մեջ Սարտրը պնդում է, որ կեցությունը կարող է բացահայտվել այնպիսի զգացողության միջոցով միայն, ինչպիսին սրտխառնուքն է, հակադրվելով Շելլերին, ում կարծիքով կեցությունը բնազդներով է բացահայտում մարդուն[14]: Օնետտիի հերոսի նողկանքն ուղղված է հասարակությանը. նա ատում է մարդկային հանրությունը, իմաստ չի տեսնում «հանուն բարեկեցիկ կյանքի» փող վաստակելու մեջ, աշխատանքը համարում է «ատելի հիմարություն, որից խուսափել անհնար է», «այն սակավաթիվ մարդիկ» էլ, որոնց ճանաչում է, «չարժեն, որ արևը ջերմացնի իրենց»[15] (հիշեցնելով Մերսոյին):

«Անդունդը» համեմատել ենք Կամյուի «Անկումի» հետ՝ խորամուխ լինելով երկու վիպակների վերնագրերից բխող նմանությունների (մարդու անկումը սեփական հոգու անդունդներում), ապա պատումի եղանակների մեջ. երկուսն էլ գրված են «գիտակցության հոսքով» և խոստովանության եղանակով՝ իբրև հասարակությունից հեռացած, ինքն իրեն մենության դատապարտած մարդու ինքնավերլուծություն, ում միակ զրուցակիցը, ինչպես Մալեան է ասում, սեփական հոգին է: Սեփական հոգու անհատակ անդունդների այս պեղումները սկիզբ են առել Դոստոևսկու «Գրառումներ ընդհատակից» վիպակից: «Թող ամեն մեկը պեղի իր ներսը. դա միակ տեղն է, որտեղ մարդը կարող է գտնել ճշմարտությունը,- ասում է Օնետտին,- ի՞նչ է գրականությունը, եթե ոչ մի երկար ինքնախոստովանություն» [16] : Անցյալը ներկայանում է որպես խառնափնթոր, խառը, կտրտված, իսկ կյանքի առանձին իրադարձություններն՝ անբովանդակ ու իմաստազուրկ: Էլադիոն ի զորու չէ գտնել սեփական անցյալի ամբողջությունը, կապակցել իր կյանքի իրադարձությունները: Նրա

[14] Sartre J-P., L'être et le néant, Gallimard,1976, p. 16.

[15] Նույն տեղում, էջ 89

[16] Juan Gabriel Vásquez, Onetti en su pozo, http://www.elespectador.com/columna138705-onetti-su-pozo

ինքնակենսագրությունն «անկապակից է և ինչ-որ չափով՝ աբսուրդ»[17],- նկատել է Խուան Գաբրիել Վասկեսը: Նույնն ենք նկատում նաև Կամյուի վիպակի հերոս Քլամանսի դեպքում: Այդ իսկ պատճառով այս երկու վիպակ-խոստովանությունները հստակ և ուղղագիծ սյուժե չունեն և միակ գիծը, որ կապում է ստեղծագործության տարբեր դրվագները, օտարումների շքերթն է: Նույնն է նաև վիպակների հերոսների տարիքը՝ քառասուն: Քլամանսն ատում է հասարակությանը՝ նրան անվանելով «շնացողներ» և «թերթեր կարդացողներ»[18]: Հետաքրքիր է, որ Էլադիոն Քլամանսի ասած «թերթ կարդացող և շնացող» մարդն է. նրա կերպարում ամենաշատն ընդգծված են հենց այդ երկու գիծը՝ մասնագիտությամբ նա լրագրող է եղել և հիմա աշխարհի հետ կապը միայն թերթ ընթերցելով է պահում, մյուս կողմից անընդհատ կապվում և խզում է կապերը մարմնավաճառ կանանց հետ: Ամփոփելով «Անկումը» վիպակի հետ զուգահեռման գիծը, զարգացրել ենք նաև լատինաամերիկյան գրականագիտության մեջ արդեն իսկ նկատված Սարտրի ստեղծագործությունների հետ զուգահեռը[19], մասնավորապես նկատելով, որ Էլադիոն իր մեկուսացումն իբրև ազատություն է ընկալում, բայց, ի տարբերություն Սարտրի, Օնետտին ցույց է տալիս, թե ինչպես է ազատությունը վերածվում անելանելի ծուղակի: Կամյուի և Սարտրի հերոսների նման Էլադիոն անկարող է հասկանալ նաև մարդկանց սրտերն իրար կապող վեհ զգացմունքը՝ սերը (այս կապակցությամբ անդրադարձել ենք սիրո անկեղծ զգացումը սեռական հաճույքով փոխարինելու երևույթին ֆրանսիական էկզիստեցնիալիզմում):

Այս գլխում անդրադարձել ենք նաև Օնետտիի այլ վիպակների՝ շեշտը դնելով ընդգծված էկզիստենցիալիստական «Հրաժեշտներ» երկի վրա: Վիպակի հերոսն անբուժելի հիվանդ է և դատապարտված մահվան: Ֆրանսիացի էկզիստենցիալիստ փիլիսոփա Էմանուել Մունիեն այսպես է ձևակերպել էկզիստենցիալիզմի խնդիրը. «Զթողնել, որ մոռացվի մահը, ահա էկզիստենցիալիզմի տխուր հոգսը... Մարդկային գոյությունը ԿԵՑՈՒԹՅՈՒՆ Է ՄԱՀՎԱՆ ՀԱՄԱՐ»[20]: Հերոսն իր կյանքի վերջին օրերն անցկացնում է այնպիսի միջավայրում, ուր մահն անընդհատ հիշեցնում է իր գոյությունը, թեև նա արհամարհում է սեփական մահը, իսկ այդ արհամարհանքը մյուս հիվանդների կողմից չի ներվում: Այսպես օտարման անդունդ է գոյանում նրա և այն հանրության միջև, որտեղ նա հարկադրված է իր կյանքի վերջին օրերն անցկացնել: Սարտրի հերոսների նման վերջինս մենությունը համարում է ազատություն՝ մի կողմից ապրելով մահվան հետ համակերպված, մյուս կողմից

---

[17] Նույն տեղում:

[18] Տե՛ս «Հինգ վիպակ» գրքում, Ե., 1991, էջ 7.

[19] Juan Gabriel Vásquez, Onetti en su pozo, http://www.elespectador.com/columna138705-onetti-su-pozo.

[20] Քաչա Վ., Գիշատիչների խնջույքը, Ե., 1976, էջ 363-364:

մահվան առջև ազատություն դրսևորելով: Ո՞րն է ազատության սահմանը, արդյո՞ք այն ամենաթողություն է, արդյո՞ք թույլատրելի է անցնել բարոյալքման սահմանը, արդյո՞ք մահվան առջև կանգնած մարդն անսահմանորեն ազատ է և ընդհանրապես կա՞ն արդյոք մարդուն դատապարտող բարոյական չափանիշներ: Վիպասանն այդ հարցերի պատասխանը տալիս է իր հերոսի անհավատությամբ, «անհավատությունը, որի մեջ, չգիտես ինչու, հենակետ էր փորձում գտնել»[21]: Այդպիսին է նաև Կամյուի Մերսոն, որ մահապատժից առաջ հրաժարվում է խոստովանությունից, որովհետև չի հավատում Աստծուն: «Հրաժեշտներ»-ի հերոսը ևս մահը համարում է մի սովորական իրադարձություն և մահվան հեռանկարի հետ կապված ոչ մի տագնապ չունի:

Օնետտին իր ստեղծագործություններում անընդհատ վերադառնում է մարդկային բարոյալքման թեմային. գրողին հետաքրքրում է, թե մինչև ուր կարող է հասնել մարդն իր բարոյալքման մեջ և դրա համար նա մարդուն հանդիպադրում է մահվան հետ՝ ստեղծելով «սահմանային իրավիճակներ»: «Մի անանուն շիրմի համար» վիպակում նույնպես բարոյական նույն խնդիրներ են արծարծվում: Այն սկսվում և ավարտվում է հերոսուհու թաղման պատմությամբ: Կոմպոզիցիոն շրջանակը մահվան անխուսափելիության և կյանքի՝ իբրև մահվան սպասման միտքն է հաստատում: Քանի որ մահը միակ ու վերջնական ճշմարտությունն է, ոչինչը, գիտակցության և կեցության խզումը՝ ամեն ինչ իմաստազրկող ու անհեթեթ դարձնող, ապա չկան մարդուն և իր արարքները դատապարտող բարոյական չափանիշներ, մարդն ազատության է դատապարտված. այդ պատճառով էկզիստենցիալիստներ Ժիդը, Սարտրը, Կամյուն չեն դատապարտում մարդուն, իրենց հերոսների անբարո վարքը, ի հաստատումն սարտրյան «էկզիստենցիալիզմը հումանիզմ է» դրույթի, չի դատապարտում նաև Օնետտին:

[21] Onetti J., Para una tumba sin nombre, M., Punto de Lectura, 2008, p. 62:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԽՈՒԱՆ ԿԱՌԼՈՍ ՕՆԵՏՏԻԻ ՎԵՊԵՐՆ ԷԿԶԻՍՏԵՆՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Այս գլխում վերլուծել և ֆրանսիական էկզիստենցիալիզմի հետ համեմատել ենք գրողի վաղ շրջանի «Ոչ մեկի երկիրը» վեպը, որի հերոսները երկրորդ համաշխարհային պատերազմիի տագնապով համակված և հուսալքված արգենտինյան երիտասարդությունն է: Տագնապը՝ որպես գոյաբանական վերապրում, երկում պատերազմի նախազգացումն է, որն իբրև կյանքի իմաստազրկում ապրում է իդեալներից զուրկ երիտասարդ սերունդը: Այս կապակցությամբ անդրադարձել ենք կեցության իմաստազրկման երևույթին ու աբսուրդի հասկացությանը՝ ֆրանսիական էկզիստենցիալիզմն ու աբսուրդի գրականությունը դիտարկելով համաշխարհային պատերազմի պատմական կոնտեքստում: Այս հերոսին՝ Լարսենին, հանդիպում ենք նաև գրողի «Նավաշինարան» վեպում: Հույսը և սպասումը, աբսուրդը և մահն Օնետտիի այս ստեղծագործության առանցքային հասկացություններն են: Այս տեսանկյունից անդրադարձել ենք Կամյուի «Հույսը և աբսուրդը Ֆրանց Կաֆկայի երկերում» էսսեին, Կամյուի վրա ազդեցություն թողած Կաֆկայի և Դինո Բուցցատիի՝ Կամյուի կողմից ֆրանսերեն թարգմանված «Թաթարական անապատը» վեպերին, քանի որ մի կողմից հույսը, մյուս կողմից՝ աբսուրդը Օնետտիի երկի գործողությունը խթանող երկու հիմնական ուժերն են: Հույսն ամեն անգամ բախվում է կեցության աբսուրդին: Ամեն անգամ հերոսը հուսալքության է մատնվում և ամեն անգամ նորից, ինչպես գրողն է անվանում «դաժան» ու «համառող հույսը» նրան հանում է վիատության անդունդից՝ ստիպելով նորից կառչել կյանքի անհեթեթությանը: Միայն Գալվեսն է, որ չի համակերպվում կեցության աբսուրդի հետ:

«Աբսուրդը և ինքնասպանությունը» էսսեում Կամյուն գրում է. «Վճռել՝ արժե՞, թե՞ չարժե ապրել այս կյանքը, նշանակում է պատասխանել փիլիսոփայության հիմնարար հարցին» [22] : Գալվեսն աբսուրդի և ինքնասպանության միջև ընտրությունը կատարում է հոգուտ ինքնասպանության: Մեկ այլ տեղ Կամյուի մոտ կարդում ենք. «Պե՞տք է կամովին հաշտվել մահվան հետ, թե անկախ ամեն ինչից հուսալ»[23]: Լարսենը գիտակցում է, որ աբսուրդը դարձել է իր կյանքի իմաստն ու այդքանից հետո շարունակում է հուսալ, նա խորապես զգում է «հույսի աբսուրդը», ինչպես Օնետտին է ասում, բայց չի դադարում հուսալ: Ձեռքը բազմաթիվ անգամ ատրճանակին տարած Լարսենը «փիլիսոփայության հիմնարար հարցին» Կամյուի ոգով պատասխանում է. «Անկախ ամեն ինչից հուսալ»: Դիաս Գրեյը

---

[22] Camus A.,Le Mythe De Sisyphe. Essai Sur L'absurde, P., Les editions Gallimard, 1942, p. 9-10.

[23] Նույն տեղում, էջ 24:

նրան է դիմում. «Ինքներդ լավ գիտեք, որ կյանքում անսպասելի բաներ չեն լինում: Այն, ինչ մեզ հանկարծակիի է բերում, այն էլ հաստատում է կյանքի իմաստը»:

«Հույսը և աբսուրդը Ֆրանց Կաֆկայի երկերում» էսսեում կարդում ենք նույնը. «Այս հնարամիտ դեղամիջոցը, որը մեզ ստիպում է սիրել այն, ինչը մեզ կործանում է, որը հույս է տալիս այս անհույս աշխարհում, ինչպես նաև ամեն ինչ փոխող կտրուկ ցատկն էկզիստենցիալիստական հեղափոխության ու հենց «Դղյակի» գաղտնիքն է»[24]: Այս խոսքերը կարելի է վերագրել նաև Օնետտիի վեպին: Պետրուսը, որ հուսալու ոչ մի հիմք չունի, նույնպես այդ համառ հուսացողներից է: Հույսն է, որ հերոսների կյանքը վերածում է սպասման, սպասումը դառնում է անհույս, իսկ մարդը չի դադարում սպասել: «Այդ ժամանակը ոչ թե հույսի, սովորական սպասման ժամանակն էր»[25]: Լարսենը չի ուզում գիտակցել նաև, որ ինքն ինչ-որ բանի է սպասում. «Նա պատրաստ էր սպասել մի ամբողջ դար, ամեն դեպքում չմտածել, որ ինչ-որ բանի է սպասում» [26] : Մարդը դառնում է համակ սպասում, իր մեջ հայում է դատարկությունը և գերադասում չգիտակցել, որ այդ դատարկությունը մահն է, իսկ սպասումը՝ մահվան սպասումը: Դատարկությունն իր մեջ գտնելով՝ անհատը խորհում է, որ ինքն անհատականությունից զուրկ ոչնչի հասարակ պարունակ է: «Ես ես չեմ… Ես մի բան եմ, որ ընդամենը ստուգման կարիք ունի… Ես անհատականություն չեմ»[27],- մտածում է Լարսենն իր մասին, իսկ Գալվեսի կնոջ մասին ասում՝ «Նա ոչ թե անհատ է, այլ պարզապես սպասման պարունակ»[28]:

Այս գլխում անդրադարձել ենք Օնետտի գլուխգործոցին՝ «Կարճ կյանքը» վեպին, որը ոչ միայն լատինաամերիկյան, այլև իսպանալեզու գրականության «բոլոր վեպերից թերևս ամենագեղեցիկն ու անթերին»[29] է: Վեպի հիմնական թեման մարդու մենությունն է ժամանակակից աշխարհում: «Կարճ կյանքը» մեկ հերոսի երկ է: Սա էկզիստենցիալիստական ստեղծագործության հիմնական միտումներից է: Այդպիսին են Կամյուի ու Սարտրի վեպերը, առանցքում մի հերոս է՝ իրադարձություններից դուրս մղվող, օտարվող անհատը: Մյուսները երևում են նրա տեսանկյունից, և մարդկային ամբողջ կեցությունը կրում է վերջինիս աշխարհայցքի գունավորումը: Օնետտիի հերոսը՝ Բրաուզենը, մենությունից դրդված Սարտրի Անտուանի նման, որոշում է գրել իր կյանքի

---

[24] Camus A.,Le Mythe De Sisyphe. Essai Sur L'absurde, P., Les editions Gallimard, 1942, p.148.

[25] Onetti J., El astillero. M., 1967, Arca, p. 99.

[26] Նույն տեղում, էջ 89:

[27] Նույն տեղում, էջ 71:

[28] Նույն տեղում, էջ 99:

[29] Vargas M., Cartas a un joven novelista, http://www.libros.am/book/read/id/216810/slug/cartas-a-un-joven-novelista

պատմությունը: «Ես կփրկվեմ, եթե սկսեմ գրել»[30],- ասում է նա: Մենությունից փրկվելու միակ միջոցը փախուստն է դեպի ներաշխարհ, դեպի երևակայություն, որը հակադրվում է արտաքին իրականությանը: Ինչպես Սարտրի վեպում, այստեղ նույնպես իրադարձություններ չկան:

Մարդկային փոխհարաբերություններն ընկալվում են որպես մարդու մենության, հետևաբար անհատի ինքնությանն սպառնացող վտանգ: Մենության մեջ է միայն մարդը գտնում ինքն իրեն, ավելին՝ մենության մեջ է հնարավոր միայն մերձենալ կեցության իմաստին: «Ես մենության կարիք էի զգում,- խոստովանում է հերոսը,- առանց մենության իմ նոր ծնունդը հնարավոր չէր: Եվ միայն մենության մեջ, առանց հապաղելու, կարող էի ըմբռնել կեցությունը, կարող էի ձեռք բերել ինքս ինձ»[31]: Սենյակը դառնում է այն տեղը, որտեղ մարդը պատերով առանձնացված է հասարակությունից, որտեղ ձեռք է բերում մենության իրավունքը: Բրաուզենի երազանքն է՝ «դառնալ սենյակ ու գտնվել այդ սենյակի ներսում»[32]: Նա հիշեցնում է Սարտրի «Սենյակը» նովելի հերոս Պիեռին, որը փակվում, մեկուսանում է կիսամութ սենյակում: Սենյակն է այն տարածքն է, որտեղ ամեն ինչ արտացոլում է մեր անձը, հիշեցնում, վերաբերում միայն մեզ: Պիեռն ու Բրաուզենն այդպես են վարվում, որովհետև զգում են, որ հասարակությունը սահմանափակում է իրենց ազատությունը: Այսպիսին է թե Սարտրի, թե Օնետտիի ազատության ընկալումը: Ուրիշները սահմանափակում են մեր ազատությունը, մարդն սկսում է գործել ըստ ուրիշների՝ իրենից ունեցած ակնկալիքների և սպասումների: «Յուրաքանչյուրն իրեն ընկալում է այնպես, ինչպես ուրիշների առաջ է բացվում,- իր հերոսի շուրթերով խոստովանում է Օնետտին,- յուրաքանչյուրը ձևավորվում է համակեցության մեջ, սկսում է իրեն ընկալել այնպես, ինչպես ուրիշներն են ընկալում իրեն և գործում է ըստ այն ամենի, ինչ ակնկալում են գոյություն չունեցող այդ ենթադրյալից»[33]:

Հասարակությունը փորձում է ճնշել մարդու անհատականությունը, փոխել նրան, ահա թե ինչու է հերոսն ընտրում հակառակ բևեռը՝ այն իրականությունը, որտեղ այդ հասարակությունը ինքն է և ինքն է այդ իշխանության տերը: Բրաուզենն զգում է, որ հասարակությունը մարդուն փորձում է զրկել ինքնությունից: Աշխատավայրում նա «փոխակերպվում է կենսուրախ ապուշի՝ շաղակրատ, հաշվենկատ, ժպտադեմ» [34] : Նրա համար համակեցությունն անհնարին բան է: Անկողնում պառկած, Բրաուզենը մահվան է սպասում, իր իսկ խոսքերով նա «ընդգծված հետաքրքրություն» ունի մահվան հանդեպ[35],

---

[30] Onetti J., La vida breve, EDHASA, 2006, p. 36.
[31] Նույն տեղում, էջ 131:
[32] Նույն տեղում, էջ 184:
[33] Onetti J., La vida breve, EDHASA, 2006, p. 168.
[34] Նույն տեղում, էջ 59:
[35] Նույն տեղում, էջ 76:

մահվան ձգտում, ինքնության լիարժեք կորստի մղում: Նա նույնիսկ մահվան է նախապատրաստում իրեն, մահը հանգիստ դիմավորելու համար՝ անկողնում պառկած խորասուզվելով «ոչնչի» մեջ, որին նպաստում է սենյակի բացարձակ լռությունը: Մահվան այս վերապրումի մեջ է բացվում մարդկային կյանքի առեղծվածը, այն, որ «կյանքը հենց դու ես և դու մնացած բոլորն ես»[36], իսկ մարդու մահով չքանում, անէանում է ամբողջ աշխարհը: Հանկարծ «բացահայտում ես, որ կյանքը հենց միայն թյուրիմացություններից է գոյանում: Գերտրուդա, աշխատանք, ընկերություն Շտայնի հետ, ինքդ քո հանդեպ տածած զգացմունքներդ՝ այս բոլորը թյուրիմացություններ են: Թյուրիմացությունից բացի ուրիշ ոչինչ գոյություն չունի… Հավանաբար ամեն մի գոյություն, որ հնարավոր է պատկերացնել, ի վերջո անպայման հանգում է թյուրիմացության»[37]:

Էկզիստենցիալ մարդն իր գործունեությամբ փորձում է լցնել գոյության դատարկը, ինչպես Մալրոյի հերոսները կամ Կամյուի Սիզիփոսը: «Բայց չէ՞ որ հայտնի է, որ մարդն ինչ-որ բան պիտի անի, յուրաքանչյուրը պիտի իրացնի իրեն ինչ-որ կերպ: Այդ ժամանակ մահն այնքան էլ էական չէ: Դու անհետանում ես, մինչդեռ հավատ ունեցող մարդուն թվում է, թե ինքը բացահայտել է կյանքի իմաստը և այն ենթարկել իրեն: Իսկ ես չեմ կարծում, թե ի զորու եմ հավատալ ու չգիտեմ ոչինչ, որ կարողանա ինձ օգնել այս և մյուս կարճ կյանքերում: Իհարկե ես կարող եմ դառնալ տարբեր խաղերի մասնակից, փորձել համոզել ինքս ինձ, մարդկանց առջև հավատացյալ Բրաուզեն խաղալ, քանի որ ցանկացած կիրք և ցանկացած հավատ մեզ երջանկություն է պարգևում, եթե կարողանում է շեղել ու մոռացություն պարգևել»[38]: Հերոսը հրաժարվում է այդ հավատից, ինչպես Մերսոն և նրա նման հրաժարվում է գոյության դատարկը գործունեությամբ լցնելուց: Ընդհանրապես արժե՞ ինչ-որ բան ձեռնարկել, երբ գոյությունը մեծագույն թյուրիմացությունն է: Այս ամենը տանում է դեպի հերոսի անշարժություն, կարելի է ասել, օնթոլոգիական ծուլության: Թերևս ոչ մի փոխաբերություն այնքան դիպուկ չբնութագրեր Բրաուզենի անընդհատ անկողնում գտնվելը, որքան «անգիր արված առաստաղը»: Սեփական սենյակում ամեն ինչ չափազանց ծանոթ է հերոսին: Ծանոթ են կահույքը, պատերի բոլոր բծերն ու հետքերը: Նա ինքն իրեն անգործության է մատնել և իր մասին ասում է. «Ինքս ինձնից անկախ բոլոր գործերս հետաձգում եմ վաղվան. ես անկարող եմ գործել: Եթե կարողանայի էլ, միևնույն է, ոչինչ էլ չէր ստացվի»[39]:

---

[36] Onetti J., La vida breve, EDHASA, 2006, p. 186:

[37] Նույն տեղում, էջ 49:

[38] Նույն տեղում, էջ 124:

[39] Onetti J., La vida breve, EDHASA, 2006, p. 103:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Օնետտիի արձակը բազմաթիվ գրական ավանդույթների ուրույն համադրություն է, կարելի է ասել, որ վերջինս ֆրանսիացի էկզիստենցիալիստներին հարազատ է աշխարհայացքով (ոճով նման է լատինաամերիկյան արձակի հեղինակներին): Վիպասանի երկերը բազում աղերսներ ունեն ֆրանսիական էկզիստենցիալիզմի հատկապես աթեիստական ուղղության հետ, բայց դրանք ֆրանսիականից կրած ազդեցություն դժվար է համարել, քանի որ լույս են տեսել Սարտրի և Կամյուի առաջին երկերի հետ գրեթե միաժամանակ: Մյուս կողմից նշենք, որ գրողի արձակը, լատինաամերիկյան էկզիստենցիալիզմի նման, ունի իր ընդգծված սոցիալական բնույթը և թեմատիկ շեշտադրումը՝ մարդու մենության խնդիրը:

2. Արձակագրի վաղ շրջանի պատմվածքներում առանցքային է մահվան և երջանկության թեման: Կամյուի նման նա ցույց է տալիս, որ մարդը երջանիկ կարող է լինել ոչ միայն հակառակ մահվան, այլև մահվան շնորհիվ: Նրա հերոսների համար երջանկությունը բնության հետ ունեցած մերձությունն է: Նրանք աստիճանաբար նմանվում են Սարտրի հերոսներին, որոնք ակարող են բացատրել բնության «խորը զառանցքը», և առաջանում է աբսուրդի զգացումը: Օնետտին ցույց է տալիս, թե ինչպես է օտարումը բնությունից և Աստծուց դառնում մարդու դժբախտության պատճառ:

3. Ֆրանսիական աթեիստական էկզիստենցիալիզմի նման գրողի հերոսներն անհավատ են: Քանի որ Աստված գոյություն չունի, չեն կարող լինել բարոյական չափանիշներ: Օնետտիին հետաքրքրում է, թե ինչպես իրեն ինչպես կդրսևորի մահվան շեմին կանգնած մարդը, որը հավատացած է, որ Աստված գոյություն չունի: Մարդը պատասխանատվություն չի զգում հասարակության չափանիշներով անբարոյական համարվող իր արարքների համար, ինչպես Ժիդի Լաֆկադիոն, Սարտրի Պիեռ Իլբերը կամ Կամյուի Մերսոն: Վիպասանը նույնպես չի դատապարտում կեցության աբսուրդի ողբերգությունը վերապրող մարդու «անբարոյական» վարքը: Ավելի շուտ նրա հակակրանքն ուղղված է նրան դատապարտող հասարակությանը, որը մարդուն փորձում է տեսնել իր պատկերացումներին համապատասխան, իսկ երբ «համընկնումը չի ստացվում», գոյանում է օտարման անդունդը:

4. Օնետտիի վիպակներում և վեպերում հաճախ են հանդիպում ֆրանսիական էկզիստենցիալիզմի գրականության ոչ միայն թեմաներ ու մոտիվներ, այլև զգացողություններ, հասկացություններ, պատկերներ ու փոխաբերություններ, որոնց միջոցով, ըստ էկզիստենցիալիստների, մարդուն բացահայտվում է կեցության ֆենոմենը: Այդ հասկացություններից են սրտխառնուքը, անկումը, անդունդը, որոնց միջոցով Սարտրն ու Կամյուն փորձում էին բացահայտել կեցության էությունը:

5. Վիպասանի հերոսը ֆրանսիական էկզիստենցիալիզմի հերոսի նման հասարակության հետ կապերը խզած, օտարված և ապասոցիալական անձն է,

որ գիտակցաբար մեկուսանում է ու ինքնամփոփվում սեփական սենյակում: Նրա հերոսները, իրականությունից փախուստի դիմելով, ապաստան են գտնում սեփական հոգու մատույցներում, ինչպես «Կարճ կյանքում» Բրաուզենը, իսկ եթե չեն գտնում իրենց ներաշխարհ ու երևակայություն տանող ուղին, մնում է կործանումն ու մահը, ինչպես Կամյուի «Անկումի» հետ բազմաթիվ աղերսներ ունեցող «Անդունդը» վիպակի հերոս Էլադիոյին, որն ինքնասպանությամբ է ավարտում կյանքը: Օնետտիի ստեղծագործության մեջ ևս արծարծվում է Կամյուի «փիլիսոփայության հիմնարար հարցը»՝ ինքնասպանության խնդիրը: Որքան էլ գոյությունն անհեթեթ է, ըստ Կամյուի, հարկավոր է ապրել այն: Գրողի հերոսներից շատերը, ինչպես օրինակ Էլադիոն ու Գալվեսը, «փիլիսոփայության հիմնարար հարցը» լուծում են հօգուտ մահվան, իսկ մյուսների համար կյանքն աբսուրդի հետ շարունակական բախում է. համառող հույսի շնորհիվ նրանք նորից կառչում են կյանքից ու Սիզիփոսի նման վերսկսում պայքարը: Էկզիստենցիալ հերոսի այս տարուբերումները հույսի և աբսուրդի միջև հիանալի է նկարագրել Կամյուն «Հույսը և աբսուրդը Ֆրանց Կաֆկայի երկերում» էսսեում, որն իսկական բանալի կարող է դառնալ «Նավաշինարան» վեպը հասկանալու համար:

6. Օնետտին հասարակական հարաբերությունների խնդիրը լուծում է ֆրանսիացի էկզիստենցիալիստների նման: Թե՛ Սարտրի, թե՛ Կամյուի հերոսները հեշտությամբ լքում են իրենց սիրած էակներին: Վիպասանի ստեղծագործություններում, հատկապես «Կարճ կյանք» վեպում արծարծվում է Սարտրի փիլիսոփայության և գեղարվեստական արձակի հիմնական խնդիրներից՝ ազատության հարցը: Նրա հերոսների համար, ինչպես և Սարտրի, ազատությունն անհատի օտարումն է, հասարակական կապերի խզումն ու բացարձակ մեկուսացումը, քանի որ հասարակությունը սահմանափակում է մարդկային ազատությունը: «Լինել ազատ, զերծ ուրիշների հանդեպ պատասխանատվությունից և առանց ջանքի ձեռք բերել ինքդ քեզ իրական մենության մեջ»,- ահա Օնետտիի հերոսի հավատամքը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. Սանտա Մարիա աշխարհի անկումը Խուան Կառլոս Օնետտիի «Խոսք տանք քամուն» վեպում, Մխիթար Գոշ, 2014, 2(41), 293-297:
2. Խուան Կարլոս Օնետտիի «Անդունդը» վիպակի և ֆրանսիական էկզիստենցիալիզմի որոշ առնչություններ, Կանթեղ, Երևան, 2016, 3, 18-29:
3. ВОПРОСЫ СМЕРТИ И НРАВСТВЕННОСТИ В ПРОИЗВЕДЕНИЯХ ХУАНА КАРЛОСА ОНЕТТИ И ФРАНЦУЗСКОГО ЭКЗИСТЕНЦИАЛИЗМА//Успехи современной науки и образования, Белгород, 2016, №7, Том 4, 71-74,
4. The issues of hope and absurd Jnuan Carlos Onetii"s novel "The shipyard"//Успехи современной науки и образования, Белгород, 2016, №10, 3, 21-23,
5. Ֆյոդոր Դոստոևսկու ազդեցությունը ֆրանսիական էկզիստենցիալիզմի վրա, ՄխիթարԳոշ, 2016, 2(45), 273-276
6. Լատինաամերիկյան էկզիստենցիալիզմի առանձնահատկություն-ները//Գրականագիտական հանդես, Երևան, 2017, էջ 270-278

КИРАКОСЯН МАРИНЕ ЭДУАРДОВНА
ФРАНЦУЗСКИЙ ЭКЗИСТЕНЦИАЛИЗМ И ПРОЗА ХУАНА КАРЛОСА ОНЕТТИ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.01. 07 – 'Зарубежная литература". Защита диссертации состоится 9-го февраля 2018 г., в 12:30 на заседании специализированного совета ВАК 003 Литературоведение имени М. Абегяна НАН РА по адресу: ул. Григора Лусаворича 15, г. Ереван, 0002, Республика Армения.

РЕЗЮМЕ

Новый латиноамериканский роман сформировался под влиянием двух основных европейских течений 20-го века: сюрреализма и экзистенциализма. Хуан Карлос Онетти является одним их тех представителей нового латиноамериканского романа (Роберто Арльт, Эдуардо Малеа, Эрнесто Сабато, Мануэль Мухика Лайнес, Хосе Доносо), на которых значительное влияние оказал европейский экзистенциализм.

Наше исследование посвящено поиску параллелей между произведениями Онетти и французским экзистенциализмом.

Прежде всего мы обратились к источникам философии экзистенциализма, отметив, что это не философская система, а возрождение личного я, которые делает возможным перевоплотить философию в живописный язык литературы, также обратились о влиянии Достоевского на французский экзистенциализм (так как это влияние значительно подействовало также на латиноамериканских экзистенциалистов, в том числе и на Онетти).

Изучили также религиозное и атеистическое течение во французском экзистенциализме, обращая внимание на то, что мировоззрение Онетти ближе к атеистическому экзистенциализму, в особенности к мировоззрению Жан-Поль Сартра и Альбера Камю, поэтому мы попытались выявить у этих экзистенциалистов те особенные черты, схожесть которых мы нашли у Онетти. Отметили, что Камю и Сарт, а также почти все французские экзистенциалисты касаются проблем существования, в то время как авторов латиноамериканского экзистенциализма, в том числе и Онетти больше волнуют и социальные проблемы. С другой стороны, заметили, что стиль Онетти существенно отличается от стиля французских экзистенциалистов и похож на стиль авторов нового латиноамериканского романа. Проза Онетти имеет также свой тематический акцент, характерный для латиноамериканской прозы, темы человеческого одиночества. В связи с этим, мы обратились к эссе Октавио Паса «Диалектика одиночества», которое можно считать символом латиноамериканского экзистенциализма. Отметили, что Онетти в своих ранних произведениях, рассказах и романах, более близок к французским экзистенциалистам.В произведениях этого периода его главной темой является тема смерти и счастья. Как и Камю он пытается показать, что человек может быть счастлив не только вопреки смерти, но и также благодаря смерти. Для его

героев, также как и для героев романов Камю «Посторонный» и «Счастливая смерть», счастье –это близость с природой. Интересно, что герои Онетти постепенно напоминают героев Сартра. Онетти показывает, как отчуждение от природы, от Бога и от общества становится основной причиной человеческих страданий. В этом смысле мы сравнивали роман Онетти «Бездна» с произведениями Сартра, рассматривая его с точки зрения понятия «тошнота» (у героя Онетти -отвращение). В произведении «Бытие и ничто» Сартр настаивает на том, что бытие для нас может раскрыться только с помощью такого чувства, как тошнота. Это произведение мы сравнили с повестью Камю «Падение». Одинаков и возраст героев и биографический-самоконфессиональный метод рассказа (оба героя заняты копанием глубин своей души, обоим свое собственное прошлое кажется бессвязным и абсурдным, оба ненавидят общество и изолируются от него). В своих работах Онетти затрагивает проблему самоубийства в духе Камю. Камю в своем эссе «Абсурд и самоубийство» пишет: «Решить стоит или не стоит прожить эту жизнь означает ответить на фундаментальный вопрос философии». Герои «Бездны» и других рассказов и романов Онетти «фундаментальный вопрос философии» решают в пользу смерти. Но есть и немало героев, которые постоянно сталкиваясь с абсурдом, снова цепляются за жизнь, возобновляя борьбу как Сизиф у Камю. Метания экзистенциального героя между надеждой и абсурдом прекрасно описал Камю в своем эссе «Надежда и абсурд в творчестве Франца Кафки», которое является настоящим ключом для понимания романа «Верфь» Онетти. С одной стороны надежда, с другой абсурд, вот ключевые силы стимулирующие сюжет этого романа. В романе «Короткая жизнь» Онетти затрагивает главный вопрос о свободе философской и художественной прозы Сартра. Для автора, как и для Сартра, свобода - это отчуждение личности, прекращение связей с обществом и абсолютная изоляция, поскольку общество ограничивает свободу человека. «Быть свободным, неответственным перед другими, без усилий завоевать себя в подлинном одиночестве»,- вот кредо героя Онетти. Героем Онетти является человек изолированный от общества, которому чужды моральные нормы общества. Человек не несет ответственности за свои поступки, которые считаются аморальными по стандартам общества, как герои Жида, Сартра и Камю. Онетти также осуждает «аморальное» поведение человека, выжившего в трагедии абсурда бытия, так как для его героев не существует Бога и поэтому не может быть и моральных норм. Сартр исходным пунктом экзистенциализма. считал слова Достоевского: «Если Бога нет, тогда все позволено». Онетти интересует то, как проявляет себя человек, который находится на грани смерти и полагает, что Бога нет. Каков предел свободы, действительно ли это вседозволенность, допустимо ли перейти моральную черту, действительно ли человек стоящий на пороге смерти бесконечно свободен и есть ли в действительности моральные нормы осуждающие человека? В поисках этих решений Онетти близок к французским экзистенциалистам.

MARINE EDUARD KIRAKOSYAN

FRENCH EXISTENTIALISM AND JUAN CARLOS ONETTI' S PROSE

Dissertation for obtaining the scientific degree of candidate of Philological Sciences, in the specialty of "Foreign Literature''(Specialty Code 10. 01. 07). The defense of the dissertation is scheduled for 9 February 2018, at 12:30 pm, at the meeting of the Specialized Council of Literary Criticism 003 of the Institute of Literature after M. Abeghyan, NAS RA. address: 15 Grigor Lusavorich str. 0002, Yerevan, Republic of Armenia.

SUMMARY

The new Latin American prose has developed under the influence of two major trends of the European literature of 20th century – surrealism and existentialism. Juan Carlos Onetti is one of those representatives of the Latin American prose (Roberto Arlt, Eduardo Mallea, Ernesto Sabato, Manuel Mujica Láinez, José *Donoso*), who bore a significant impact of the European existentialism.

Our research is dedicated to the linkages between Onetti and French existentialism. First of all, we have addressed the origins of the philosophy of existentialism, noting that it's not a philosophical system but a concept of a personal survival through life which makes it possible to translate the philosophy into a figurative language of the literature.

We have discussed the impact of Dostoevsky on the French existentialism (since this influence has been manifested in Latin American existentialists as well, including Onetti). We have touched upon the peculiarities of religious and atheistic directions of the French existentialism, having noted that Onetti's perceptions were closer to atheistic existentialism, particularly to the views of Jean-Paul Sartre and Albert Camus.

Therefore, we have tried to reveal the major traits of the French existentialism based on the similarities we have found in Onetti's novels. We noticed that Camus and Sartre, and French existentialists, in general, tackle exclusively existential issues, whereas the authors of the Latin American existentialism, including Onetti, are also concerned with social issues.

On the other hand, we noticed that Onetti's style is different from that of the French existentialists and is similar to the style of the authors of the new Latin American prose.

Onetti's prose has also its thematic emphasis which is quite common for the Latin American prose – the theme of a human solitude. In this respect, we referred to the essay "The Labyrinth of Solitude" by Octavio Paz which can be regarded as the symbol of the Latin American existentialism.

We noticed that in his early writings – novels and stories - Onetti is closer to the French existentialists. The topics of life and death are central themes in his early period. Just like Camus he tries to show that a person can be happy not only in spite of death but also due to death. Just like for the heroes of the novels "The Stranger" and "A

Happy Death" by Camus, Onetti's heroes find happiness in their synergy with nature. Interestingly, Onetti's heroes gradually gain propinquity with the heroes of Sartre. He shows how alienation from nature, God and society becomes the main reason for unhappiness of a human being. In this respect, Onetti's novel "The Pit" was compared with Sartre's writings, analyzing it from the concept of nausea (disgust in Onetti's hero). In his philosophic essay "Being and Nothingness" Sartre asserted that being can be disclosed only through such a sense as nausea. This work was compared with the novel "The Fall" by Camus. There is resemblance in both the age of heroes and biographic self-confessionary nature of the story (both are busy delving in the abysses of their sole; both find their past meaningless and absurd; both feel resentment towards society and seek isolation). In his writings Onetti touches upon the issue of suicide in the spirit of Camus. In the essay "Absurd and Suicide" Camus writes "Judging whether life is or is not worth living amounts to answering the most fundamental question of philosophy." The heroes of "The Pit" and other novels and essays by Onetti solve "the most fundamental philosophical question" in favor of death. However, there are also a few heroes who, endlessly facing absurdity, again cling to life, resuming their battle just like Sisyphus in Camus's essay.

A hero's existential reflections between the hope and absurd are described brilliantly in the essay "Hope and the Absurd in the Work of Franz Kafka" by Camus which is a true key to understanding Onetti's novel "The Shipyard". Hope on the one hand and the absurdity, on the other are the dominating forces developing the intrigue of this novel. In his novel "A Brief Life" Onetti tackles the issue of freedom – the fundamental question of Sartre's philosophy and literature. Just like for Sartre, the freedom for the heroes of the novel lies in an individual's alienation, breakage of social ties and complete isolation, since the society limits human freedom. "Being free, free from the responsibility towards others and regain yourself effortlessly in true solitude, " – that's the credo of Onetti's hero. Onetti's hero is a person isolated from the society who is alien to any moral norms of the society. A person doesn't feel any responsibility for his actions which are regarded as immoral by the socially accepted norms, much as the heroes of Gide, Sartre and Camus. Onetti also doesn't condemn an immoral conduct of a man who survives through the tragedy of the absurdity of life, because for his heroes God doesn't exist, so moral norms are also non-existent. Sartre considered the following words of Dostoyevsky as the starting point of existentialism "If God doesn't exist then everything is allowed." Onetti is interested to know how a person, who faces death and believes that God doesn't exist, would behave himself. Where does the border of freedom ends? Is everything permitted? Is it allowed to step into where morale ends? Is a person who faces death is absolutely free? Are there moral criteria for condemning a person? In his efforts to address these issues,

Onetti stands close to the French existentialists.